Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-170-30.11.2012-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում « էլեկտրաէներգետիկայի և ջերմաէներգետիկայի ոլորտներում նոր արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման, ինչպես նաև էլեկտրաէներգետիկայի, ջերմաէներգետիկայի և բնական գազի ոլորտներում հաղորդման (փոխադրման) կամ բաշխման ցանցերի կառուցման,» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի «սակագին» հասկացությունում « կառուցման կամ վերականգնման և » բառերը հանել:

Հոդված 3. 20-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝
«4. Լիցենզավորված անձն իրավասու է բացահայտել իր հաճախորդների կողմից օգտագործված ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկություններ՝ «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված վարկային բյուրոներին՝ այդ օրենքով նախատեսված կարգով և սահմաններում:»:

Հոդված 4. Օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Հանձնաժողովը սակագինը սահմանում, վերանայում (վերահաստատում կամ փոփոխում) և որոշում է կայացնում լիցենզավորված անձի սահմանման (վերանայման) հայտի փաթեթը հանձնաժողով ներկայացնելու օրվանից հետո՝ 80 աշխատանքային օրվա ընթացքում (փոքր հիդրոէլեկտրակայանների և

էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայանների դեպքում՝ 25աշխատանքային օրվա ընթացքում)»:

Հոդված 5. Օրենքի 23-րդ հոդվածի

1.1-ին մասում «էլեկտրաէներգետիկայի և ջերմաէներգետիկայի ոլորտներում նոր արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման, ինչպես նաև էլեկտրաէներգետիկայի, ջերմաէներգետիկայի և բնական գազի ոլորտներում հաղորդման (փոխադրման) կամ բաշխման ցանցերի կառուցման, » բառերը հանել:

2. 2-մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«2. Սույն հոդվածով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությունների էությունը կազմող գործառույթները սահմանվում են համապատասխան գործունեության լիցենզիաներով:

Կարգավորման ենթակա չեն՝

ա) բացառապես սեփական կարիքների համար ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները,

բ) ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները, եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 5.8ՄՎտ,

գ) մինչև 150 կՎտ (ներառյալ) հզորությամբ արևային էլեկտրակայանների արտադրության գործունեությունը՝ կառուցման ժամանակահատվածում,

դ) բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության, ինչպես նաև դիզել գեներատորային կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը:

Բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը կարգավորման ենթակա է միայն կայանի կառուցման ժամանակահատվածում:»:

Հոդված 6. Օրենքի 24-րդ հոդվածի

1. 4-րդ մասում « 60 օրը» բառերը փոխարինել « 80աշխատանքային օրը (փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայանների դեպքում՝ 25 աշխատանքային օրը)» բառերով:
2. 5-րդ մասում «տասնօրյա ժամկետում» բառերը փոխարինել « հինգ աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հոդված 7. Օրենքի 26-րդ հոդվածի « արտադրող կայանների կառուցման կամ վերականգնման» բառերը փոխարինել « Էլեկտրական կամ ջերմային էներգիայի(ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) արտադրության» բառերով, իսկ հոդվածի վերջում լրացնել նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ « Էլեկտրական կամ ջերմային էներգիայի(ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) արտադրության լիցենզիա տրամադրելու համար հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող երաշխիքների ներկայացման պահանջը տարածվում է Էլեկտրական կամ ջերմային էներգիայի(ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված) կայանների կառուցման ժամանակահատվածի վրա:»:

Հոդված 8. Օրենքի 27-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

« 4. Փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված գործարքներն իրականացնում են առանց հանձնաժողովի թույլտվության (համաձայնության), եթե այդ անձինք էներգետիկայի բնագավառում չունեն գործունեության այլ տեսակի լիցենզիա կամ այլ կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա: Փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված գործարքների իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ, այդ մասին գրավոր տեղեկացնում են հանձնաժողովին:»:

Հոդված 9. Օրենքի 34-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել :

Հոդված 10. Օրենքի 35-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 35. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ**

1. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձին տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում էլեկտրական էներգիա արտադրող կայան(ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայան) կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու) էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրելու և շուկայի կանոններով դա վաճառելու իրավունք: Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձի համար սակագինը սահմանվում է կայանի կառուցման ավարտից հետո:

2. Ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձին տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում ջերմային էներգիա արտադրող կայան կառուցելու(վերակառուցելու, ընդլայնելու), ջերմային էներգիա արտադրելու և հանձնաժողովի կողմից սահմանված կարգով դա վաճառելու իրավունք: Ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի համար սակագինը սահմանվում է կայանի կառուցման ավարտից հետո:

3. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձանց, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և շուկայի այլ մասնակիցների փոխհարաբերությունները կարգավորվում են շուկայի կանոններով և պայմանագրերով:

4.Սույն հոդվածով սահմանված լիցենզիաները տրվում են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի զարգացման հեռանկարային ծրագրերը, տեղական պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը և ներքին շուկայի սպառողների շահերի պաշտպանությունը:»:

Հոդված 11. Օրենքի 36-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 36. ՀԱՂՈՐԴՄԱՆ (ՓՈԽԱԴՐՄԱՆ) ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ**

1. Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձին տրվում է Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման ծառայություն իրականացնելու, էլեկտրական էներգիայի հաղորդման ցանց կառուցելու(վերակառուցելու, ընդլայնելու) և Հայաստանի Հանրապետության տարածքով երրորդ երկրներ էլեկտրական էներգիա (հզորություն) տարանցելու իրավունք: Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա

ունեցող անձը պարտավոր է իր գործունեությունն իրականացնել շուկայի կանոններին և պայմանագրերին համապատասխան:

2. Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձանց, համակարգի օպերատորի և շուկայի մասնակիցների փոխհարաբերությունները կարգավորվում են շուկայի կանոններով և պայմանագրերով:

3. Բնական գազի փոխադրման լիցենզիա ունեցող անձին տրվում է հանձնաժողովի կողմից սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության տարածքում բնական գազի փոխադրման ցանց կառուցելու(վերակառուցելու, ընդլայնելու)բնական գազ փոխադրելու, արտադրողից (արդյունահանողից) կամ ներկրողից բնական գազ գնելու, բաշխման, արտահանման լիցենզիա ունեցող անձանց կամ անմիջապես սպառողին բնական գազ վաճառելու, Հայաստանի Հանրապետության տարածքով երրորդ երկրներ բնական գազ տարանցելու իրավունք:

4. Ջերմային էներգիայի փոխադրման լիցենզիա ունեցող անձին տրվում է հանձնաժողովի կողմից սահմանված կարգով լիցենզիայով սահմանված տարածքում ջերմային էներգիայի փոխադրման ցանց կառուցելու(վերակառուցելու, ընդլայնելու)արտադրողից ջերմային էներգիա ստանալու կամ գնելու, բաշխման լիցենզիա ունեցող անձանց առաքելու կամ անմիջապես սպառողին ջերմային էներգիա վաճառելու և կարգավարական ծառայություն իրականացնելու, իրավունք: Ջերմային էներգիայի փոխադրման գործունեության իրավունքը՝ պայմանավորված ջերմային էներգիայի առաքման տեխնոլոգիայով, կարող է տրվել ջերմային էներգիայի արտադրության կամ բաշխման լիցենզիա ունեցող անձին՝ միևնույն լիցենզիայով:»:

Հոդված 12. Օրենքի 38-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«**Հոդված 38. ԲԱՇԽՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ**

1. Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձն ունի Հայաստանի Հանրապետության որոշակի տարածքում սպառողներին էլեկտրական էներգիա (հզորություն) բաշխելու բացառիկ իրավունք, ինչպես նաև էլեկտրական էներգիայի բաշխման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու) շուկայի կանոններին և լիցենզիայի պայմաններին համապատասխան՝ էլեկտրական էներգիա (հզորություն)

գնելու և վաճառելու, իրավունք: Բացառություն կարող են կազմել միայն սույն օրենքի 47-րդ հոդվածի երկրորդ կետով սահմանված դեպքերը:

2. Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձանց, համակարգի օպերատորի և շուկայի այլ մասնակիցների փոխհարաբերությունները կարգավորվում են շուկայի կանոններով և պայմանագրերով:

3. Բնական գազի բաշխման լիցենզիա ունեցող անձին տրվում է Հայաստանի Հանրապետության որոշակի տարածքում սպառողներին բնական գազ բաշխելու բացառիկ իրավունք, ինչպես նաև բաշխման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), հանձնաժողովի կողմից սահմանված կարգով՝ բնական գազ գնելու և վաճառելու իրավունք : Բացառություն կարող են կազմել միայն սույն օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերը:

4. Ջերմային էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում սպառողներին ջերմային էներգիա բաշխելու իրավունք, ինչպես նաև ջերմային էներգիայի բաշխման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), հանձնաժողովի կողմից սահմանված կարգով ջերմային էներգիա գնելու և վաճառելու իրավունք: Բացառություն կարող են կազմել միայն սույն օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերը: »:

Հոդված 13. Օրենքի 40-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 40. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Լիցենզավորված անձանց միջև կնքված, ինչպես նաև արտահանման և ներկրման պայմանագրերն ուժի մեջ են մտնում հանձնաժողովում գրանցվելու պահից: Պայմանագրերի գրանցման կամ մերժման առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 10 աշխատանքային օրը, իսկ փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայանների և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված այլ անձանց միջև կնքվող պայմանագրերի գրանցման կամ մերժման ժամկետը՝ 5 աշխատանքային օրը:»:

Հոդված 14. Օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մասում «արտադրական հզորությունների կառուցման և վերականգնման» բառերը փոխարինել «Էլեկտրական (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված) կամ ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց վրա կայանների կառուցման համար

նախատեսված ժամանակահատվածում,» բառերով, իսկ «10»թիվը փոխարինել «30» թվով:

Հոդված 15.Օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի գ-ը կետում «լիցենզիան» բառը փոխարինել «լիցենզիա ունեցող անձի համար Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը » բառերով:

Հոդված 16. «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրված արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման լիցենզիաները գործում են մինչև այդ լիցենզիաների գործողության ժամկետի ավարտը: Արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից այդ լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման կամ վերաձևակերպման նպատակով հանձնաժողով դիմելու դեպքում տրամադրվում է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածին համապատասխան արտադրության լիցենզիա, որն իր մեջ ներառում է նաև կառուցման ժամանակահատվածը:»:»

Հոդված 17. «Սույն օրենքի 14-րդ հոդվածը չի տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրող փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործմամբ էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրող կայանների վրա: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրող փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործմամբ էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրող կայանների արտադրած էլեկտրաէներգիան (հզորությունը) 15 տարվա ընթացքում ենթակա է գնման շուկայի կանոններով սահմանված կարգով՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության առաջին լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից:»:

Հոդված 18. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

««Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների

h/h	**Առարկության, առաջարկություն հեղինակը**	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունը**
1.	**ՀՀ կառավարություն**	**««**Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում «օրվանից» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրը» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջների:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
2.	**ՀՀ կառավարություն**	««Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրացնել հետևյալ (երրորդ) հոդվածով.	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		«**Հոդված 3.** 20-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «4. Լիցենզավորված անձն իրավասու է բացահայտել իր հաճախորդների կողմից օգտագործված ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկություններ՝ «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված վարկային բյուրոներին՝ այդ օրենքով նախատեսված կարգով և սահմաններում:»:»		
3.	**ՀՀ կառավարություն**	««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում 1-ին և 2-րդ հոդվածներն անհրաժեշտ է միացնել՝ նկատի ունենալով, որ նշված փոփոխությունները վերաբերում են նույն՝ 19-րդ հոդվածին	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

4.	**ՀՀ կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում «4 հունիսի 2002 թվականի, ՀՕ-373» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2002 թվականի հունիսի 4-ի թիվ ՀՕ-373-Ն» բառերով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ և 39-րդ հոդվածների պահանջների:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
5.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 3-րդ հոդվածում «օրվանից» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրը» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջների:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
6.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդվածը լրացնել 3-րդ մասով, որով համապատասխան փոփոխություն կկատարվի «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասում՝ սահմանելով, որ լիցենզավորող մարմինը ոչ պիտանի դարձած լիցենզիայի կամ ներդիրի կրկնօրինակը լիցենզավորված անձին կտրամադրի նրա կողմից դիմումը տալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում: Այսպիսով	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		կապահովվի միանման մոտեցում Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսվող ժամկետի հետ (այն է՝ օրացուցային օրերի փոխարինում աշխատանքային օրերով):		
7.	**ՀՀ կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ 1-ին հոդվածի 2-րդ պարբերությունում «ուժի մեջ մտնելուց հետո» բառերից հետո լրացնել «նախկինում» բառը, քանի որ ջրավազանային կառավարման պլանների ուժի մեջ մտնելուց հետո շրջակա միջավայրի իրական պատկերը կփոխվի և անհրաժեշտություն կառաջանա նախկինում տրված ջրօգտագործման թույլտվությունները վերանայել:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն